

«ՌՈՒՍ-ՀԱՅՏԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ».—կազմեցիճ և խմբագրեցիճ պրոֆ.-դոկտ.

Ա. Ս. ՂԱՐԻԲԵԱՆ, պրոֆ.-դոկտ. Ս. Գ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ,

Մ. Ա. ԳԵՎՈՐԳԻԱՆ, Երևան, 1945 թ.

Բառարանային գործերը գրական այն աշխատությունների թվին են պատկանում, որ յուրաքանչյուր նոր հրատարակություն. առավել ևս նույնաբանությամբ նոր աշխատություն, պետք է իր ուրույնությունն ունենա: Յուրաքանչյուր աշխատություն հրատարակելիս պետք է նորոգվի, թարմացվի բառապաշարը, ստուգվի թարգմանությունների հշտությունը, ավելացվեն լեզվական նորությունները: Բառարանային նոր աշխատությունը իր բառապաշարով, ընդգրկած բառ-հոգվածներով ու թարգմանություններով պետք է լրիվ չափով արահայտի իր ժամանակը:

Ռուսերենին առնչված նախորդ բառարաններից շատերը, որքան էլ հաջողված աշխատություններ լինեն, չեն կարող բավարարել մեր այսօրվա պահանջները: Գրեթե ամեն օր մեր գրականության մեջ, պարբերական հրատարակություններում հանդիպում ենք նորանոր բառերի, բառառությունների, որոնցից շատերը դեռ անգ չեն գաել բառարաններում:

ՀՍՍՌ ԳԱ Ն. Մառի անվան Լեզվի Ինստիտուտի հրատարակած «Ռուս-հայերեն բառարանը» իր թե՛ բառապաշարում և թե՛ թարգմանական բաժնում շատ նորություններ ունի և մեծ չափով կօժանդակի ռուսերեն սովորելու գործին, մեծ չափով կօգնի մեր դպրոցականներին, ուսանողներին և ռուսերեն իմանալու նախանձախնդիր մարդկանց՝ սովորելու այդ լեզուն:

Բառարանագրական այս պահանջը հաշվի առնելն է, որ բառարանում կազմողների կողմից գրված է. «Ռուս-հայերեն այս բառարանը կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր նպատակ կունենան ուսումնասիրելու ռուսերեն կամ հայերեն լեզուները, միաժամանակ կարող է ծառայել նաև իրեն օժանդակ ձեռնարկ բանավոր խոսքին տիրապետելու համար, ինչպես և հասարակական-քաղաքական, հանրամատչելի դիտական և գեղարվեստական գրականություն կարդալիս ու թարգմանելիս»:

Ռուս-հայերեն այս նոր բառարանը, իր ծավալի սահմաններում, արդյոք կարողացել է ընդգրկել վերջին տասնամյակի լեզվական նորությունները:

Բառարանի ռուսական բառահավաքում, շատ նորությունների հետ, բացակայում են այնպիսի բառեր, որոնք, մեր կարծիքով, ազատ կերպով իրավունք ունենին տեղ գրավելու 28000 բառ-հոգված ունեցող թարգմանական բառարանում, ինչպես՝ аварийный, боепитание, боеприпас, буханка, выпускник, дегазация, дегазатор, донор և այլն: Հնդհակառակն, աշխատությունը ծանրաբեռնված է ուրիշ շարք բառերով, որոնցից շատերը գուցե տեղ չգտնեն բառարանում նույնիսկ այն ժամանակ, եթե աշխատության բառ-հոգվածների քանակը կրկնապատկենք, ինչպես՝ адрес-

календарь, амулет, баклуши бить պարապ-սարապ ման գալ, горошина սիսեռահաարիկ, ոլոռահատիկ և այլն։ Այս բառերի մի զգալի մասը Ուշակովի 90.000-ոց բառարանում չի նշված որպես առանձին բառ-հոգված։

Արժեքը շատ փոքր է հայտնություն (Հովհաննու)-апокалипсис-ի, божба-ի, առետր. grosбух բառերի, երբ նույն բառարանում բացակայում են бомбежка, воскресник և առևտրական շաա ավելի հաճախակի գործածվող главбух բառերը։ Եթե 28-հաղարանոց ռուս-հայերեն բառարանի համար անհրաժեշտ էր, ասենք թե, абсурд անհեթեթություն, արսուրդ, абсурдный անհեթեթ՝ բացատրությունները տալուց հետո ունենալ նաև абсурдность անհեթեթություն բառը, ապա շաա ավելի անհրաժեշտ էր բառարանում տեղ տալ подкованность բառին։ Ինչպես է դադարիքը, Ի՞նչն է պատճառը, հարձում ենք այն, որ մեր նշած բառերի առաջին խմբի մի մասը չկա գրախոսվող աշխատությանը նախորդող բառարաններում, մի մասն էլ կա որոշ բառարաններում, բայց ոչ իրենց հիմնական, այբբենական տեղում, իսկ ինչ վերաբերում է բառերի մյուս խմբին՝ պատվավոր տեղ են դրավում բառարանին նախորդող նույնաբնույթ աշխատություններում։

Ռուս-հայերեն բառարանում զգալի չափով տեղ է արված իգական վերջավորություն ունեցող բառերին։

Компаньон կոմպանիոն, ընկեր բառ-հոգվածից հետո նման բառարանում բոլորովին ավելորդ է տեղ տալ компаньонка կոմպանիոնուհի, ընկերուհի բառ-հոգվածին։ Ռուս-հայերեն բառարան կազմողները շատ զեպքերում պետք է հրաժարվեին «ուհի»-ներից։

Թարգմանական բառարանի արժեքը հիմնականում որոշվում է թարգմանության հաջողություններով։ Բառարանի ծավալի փոքրության պատճառով կազմողները ստիպված են եղել համառոտել բառամթերքը, սահմանափակել հոմանիշների քանակը, կրճատել մասնագիտական տերմինոլոգիան, որպեսզի ըստ հնարավորին լրիվ արվեն ամենից ավելի գործածական բառերն ու նրանց նշանակությունները, ինչպես և բնորոշ արահայտություններն ու բացատրությունները, որոնք ճշտում են բառերի նշանակությունը ու նրա տարրեր երանգները։

Բառարանում команда բառը թարգմանված է՝ 1. հրաման, հրամանի խոսք, հրամանատվություն. 2. խումբ, զորախումբ. չի տրված քիմ բացատրությունը, որին մենք հաճախակի հանդիպում ենք. այսպես՝ футбольная команда ֆուտբոլային թիմ։

Эзоповский թարգմանված է էզոպյան, эзоповский язык էզոպյան լեզու։ Մեր գրականության մեջ միշտ էլ գործ է ածվել եզոպոսյան, ինչպես՝ եզոպոսյան լեզու, եզոպոսի առակներ և այլն։

Абонемент բաժանորդություն նշանակելուց բացի, նշանակում է նաև բաժանորդագրության տոմսը՝ քարտը։

Авианосец բառի համար ունենք ավիակիր բառը։

Колесо անիվ բառի համար պետք է տրվեր նաև ակ թարգմանությունը, քանի որ կազմողները չեն խուսափում ժողովրդական խոսակցական ձևեր տալուց։

Բառարանում жёрнов թարգմանված է ջրադացաքար, ջազաքար, երկան, երկանաքար. թվում է, թե բոլորն էլ պետք է սխալ ու պակասավոր համարել։ Այս թարգմանություններից ոչ մեկն էլ այսօր չի բացատրում

жернов-ի իսկական իմաստը, այն է՝ աղացաքար, քանի որ և՛ ջրաղացը, և՛ հողմաղացը, և՛ էլեկտրաղացը գործ են ածում жёрнов-ը, հո չի կարելի ասել էլեկտրաղացի ջրաղացաքարը կամ հողմաղացի ջրաղացաքարը:

Թարգմանությունների մեջ որոշ միօրինակություն ևս պետք է լինի: Авиабаза թարգմանված է ավիացիոն բազա, իսկ авиазавод՝ սավառակների գործարան:

Ռուս-հայերեն նոր բառարան կազմողները եթե ժամանակի տեսակետից հնարավորություն չունենին գրականության մեջ եղած նորությունները ընդգրկելու, ապա լրիվ չափով հնարավորություն ունենին իրենց բառարանում տալու բառական և բառ-առումնային այն նորությունը, որը դեռ բառարանը հրատարակվելուց շատ առաջ ընդունվել, հաստատվել և պաշտոնապես հրապարակվել է Տերմինաբանական կոմիտեի կողմից:

Люд ըստ Տերմինաբանական կոմիտեի որոշման ընդունված է թարգմանել դիտանք, բառարանում թարգմանված է՝ դոնակ, անցք: Обходить բառը, ըստ որոշման՝ թեանցել, թիկնանցել, շրջանցել: Նույն բառը բառարանում թարգմանված է՝ 1. շրջել, շրջագայել, պատել: 2. շուրջն անցնել, շրջանցել: 3. խաբել, խուսափել, դանց անել: Բառարանի այս թարգմանություններին և ոչ մեկը չի կարող ապահովել, ասենք թե՛ наши гвардейцы обходили противника նախադասությունը, որը պետք է թարգմանվի մեր գվարդիականները թեանցեցին կամ թիկնանցեցին թշնամուն:

Падёж ըստ որոշման թարգմանվում է՝ անկում, ըստ բառարանի՝ կոտորած, մահ, սատկոտում:

Паек ըստ որոշման՝ օրաբաժին, ըստ բառարանի՝ բաժին, փայ, օրապահիկ, օրապարեն, մթերաբաժին:

Арнергард ըստ պարբերական մամուլի գործածության թարգմանվում է թիկունքակալ, ըստ բառարանի՝ վերջապահ, արիերգարդ: Шли арнергардные бок թիկունքակալ մարտեր էին գնում:

Заградительный огонь ըստ որոշման, փակոցային կրակ, ըստ բառարանի թարգմանված է՝ խափանիչ կրակ:

Բառերի մի ուրիշ շարքի մեջ տրված են Տերմինաբանական կոմիտեի ընդունած թարգմանությունները. բայց ամենավերջում, ինչպես՝ переправа ըստ որոշման՝ գետանց, ըստ բառարանի՝ 1. անցում, անցնելը, 2. անցաբան (գետի), գետանց:

Рубеж ըստ որոշման՝ բնագիծ, ըստ բառարանի՝ սահման, ոահմանագիծ, եզրագիծ, բնահատ, բնագիծ:

Տերմինաբանական կոմիտեի ընդունած շատ բառեր չկան բառարանում, ինչպես՝ тральщик, дальнебойность, войсковой, — тыл գորաթիկունք, որ շատ գործածական է, նույնիսկ մեր մամուլում հաճախակի հանդիպում ենք նաև общевойсковой համադորական բառին:

Բառարանագրական տեսակետից թերություն է կրկնակի ուղղումներ, ասես-բր գործածելը, ինչպես՝ тля ասես՝ тлен, тлен տես՝ тление: Ի դեպ՝ тля բառի 2-րդ առումը թարգմանված է՝ բուսոջիլ, ճճի, ափիս, մինչդեռ ընդունված լվիճ բառը չկա:

Ռուս-հայերեն բառարանի վերջում տրված է սուսաց լեզվի համառոտ քերականություն, որտեղ բացատրված են ուսուցիչների հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները: Այդ շատ լավ է:

Քերականական բաժնի միջոցով հնարավոր է վերականգնել բառական այն ձևերը, որոնք չէին կարող տեղ գտնել բառարանում, և զա մեծ չափով կօժանդակի լեզուն սովորելուն:

Մեր կատարած դիտողությունները չեն իջեցնում գրախոսվող բառարանի արժեքը: Ռուս-հայերեն բառարանը իր արժեքավոր տեղը ունի մեր բառարանագրության մեջ: Ողջունելի պետք է համարել Ն. Մառի անվան Հեզվի Խնստիտուտի առաջին բառարանի հրատարակությունը: Պետք է ցանկություն հայտնել շուտով մեր սեղանի վրա տեսնելու հայ-ռուսերեն բառարան, որի պահանջը ավելի գդալի է մեր միջավայրում:

Մեր պահանջներն այսօր այնքան են մեծացել, որ մեզ չի կարող բավարարել 28-հազարանոց բառարանը, որքան էլ հաջողված աշխատանք լինի այն: Այսօր մենք պահանջ ենք զդում մեր սեղանի վրա տեսնելու ռուսերենին առնչված ընդարձակ բառարաններ, թե՛ ռուս-հայերեն և թե՛ հայ-ռուսերեն, որոնք ըստ հնարավորին լիակատար կերպով ընդգրկեն՝ բառական և բառ-առումնային այն նորույթները, որ ստեղծել են ռուս և հայ գրականությունը Հոկտեմբերյան ռեոլուցիայից հետո. սովետական կարգերում և հատկապես այն նորույթը, որ երկու լեզուներում ստեղծվել է Հայրենական պատերազմի և ետպատերազմյան ժամանակաշրջանում: Այդ աշխատանքին պետք է ընդհուպ ձեռնամուխ լինի Գիտությունների Ակադեմիայի Ն. Յա. Մառի անվան Հեզվի Խնստիտուտի գիտական կոլեկտիվը:

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

